Պարույր Սևակ

Մայրենի լեզու

Դու մեր մեծ երթի գավազանակիր
Եվ մեր պատմության մեծագո՛ւյն դիվան,
Մեր ազնըվության գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան:
Անցյալին պարզված դու մեր լսափող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված:
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու յուղված:
Դաժան դարերի ամե՛ն մի ժամին
Շա՛տ բան է խլել մեզնից թշնամին:
Բարդելով վերքին վերք ու անարգանք,
Հեծության վրա մի նոր հեծություն՝
Խլել է մեզնից հանգիստ ու հարգանք,
Խլել է մեզնից փառք ու մեծություն,
Խլել կյա՛նքը մեր և... կյանքի՛ց էլ թանկ
Մեր հո՛ղը, հո՛ղը,
Մեր սուրբ հայրենի՛ն:
Շա՛տ բանից է մեզ զրկել վայրենին:
Մեր կերած հացին քսել է նա ժա՛նգ,
Բայց և... դարավոր բնիկ վայրերի
Կորըստի լեղի կարո՛տն է քսել,

Մեր խումին խառնել մեր սուրբ մայրերի
Արցո՛ւնքը, սակայն... և արյո՛ւնը սև,
Բայց մենք չենք զրկվել... մեր բերնի համից.
-Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,
Մեր հայրենահամ անուշ բարբառով:
Շա՜տ բանից է մեզ զրկել թշնամին:
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,
Հատել է ականջ ու ոտնաթաթեր,
Աչքեր է հանել դաշույնով իր սուր,
Կտրել է նաև արմատից լեզուն,
Եվ սակայն... իզո՜ւր.
Չի՛ հատվել լեզուն,
Մնացել է նա՝ հատվելո՜վ անգամ...
Քե՛զ՝ մեր հայկական և արամական,
Չկարողացան քեզ խլել մեզնից
Ո՛չ խարդավանքով արամեական,
Ո՛չ բյուզանդական սիրով անազնիվ,
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Քրիստոսի մարդ-չմարդությամբ,
Ո՛չ Մուհամեդի ճմլիչ ոտերով.
Ո՜չ ճշմարտությամբ,
Ո՜չ էլ ստերով:
Չկարողացա՛ն քեզ մեզնից խլել:
Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ,
Որ չե՜ն էլ կարող քեզ մեզնից խլել,
Ինչպես չեն կարող խլել մի դրոշ,
Որ հազարամյա դաժան մարտերում
Փողփողացել է միշտ էլ... սրտերո՜ւմ:
Ո՛չ, քեզ ո՛չ մեկը կուլ տալ չի՜ կարող.
Ագահ կոկորդում դու խոր ես խրվում:

Ո՛չ, քեզ ո՛չ մեկը փուլ տալ չի՛ կարող,
Ինչպես երկինքը երբեք չի փլվում:
Չե՛ս խլվի երբեք,
Չե՛ս փլվի երբեք,
Ինչպես արյունից գո՛ւյնը չի խլվում...
Եվ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի,
Որ քեզ կամենա գողանալ մեզնից.
(Մի՛ ասա «մեզնից», «աշխարհի՛ց» ասա).
Չէ՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու,
Այլև մասո՛ւնք ես,
Մասո՛ւնք ես մի սուրբ,
Անկողոպտելի մասո՛ւնք սրբազան՝
Դարերի խորքից դարերին հասած:
Մասո՞ւնք: Ինչպե՞ս թե: Մասունքրս ո՛րն է:
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:
Իսկ դու՝ դարավոր, բայց և առույգ ես,
Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես,
Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես,
Շատերի մեջ ես, բայց պետական ես,
Եվ դրանով իսկ դու պետքական ես
Այն պետությանը, որ վաղը պիտի
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի...

29.I.1962թ.
Երևան